ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ԱՄՆ-Ի 8 ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՀԱՅԵՐԻ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԲԱԹՈՒՄԻ

ԲԱԹՈՒՄԻ, 22 փետրվարի.— Փետրվարի 21-ին, ռումինական «Արդեալ» նավով, Նյու-Յորքից Բաթումի ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգներից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող հայերի մի խումբ, հիմնականում բանվորներ— մետաղագործներ, փականագործներ, մեխանիկներ, էլեկտրիկներ, ինչպես և արհեստավորներ։

Բաթումիի նավահանգստում ջերմ հանդիպում տեղի ունեցավ ժամանածների հետ։ Դժվար է նկարագրել ժամանածների երջանկությունը։ Քարավանի ղեկավար Փրեդ Ասլանյանը, նրանց բոլորի զգացմունքներն արտահայտելով, ասաց.

— Այս օրը իմ կյանքի ամենաերջանիկ օրն է։ Ես թեկուզ և ծնվել եմ Ամերիկայում, ուր իմ ծնողները գաղթել էին Թուրքիայից դեռևս սույն դարի սկզբին, բայց վաղուց երազում էի տեղափոխվել Սովետական Հայաստան, որտեղ մեր ժողովուրդը ազատագրվել է կապիտալիստական ստրկությունից և իր նոր կյանքն է կառուցում։ Երբ հայրենիք դառնալու հնարավորություն ստեղծվեց, ես առաջիններից մեկը եղա, որ ցանկություն հայտնեցի վերադառնալու Սովետական Հայաստան, որպեսզի զգամ ազատ աշխատանքի երջանկությունը և դաստիարակեմ իմ երեխաներին սոցիալիստական Հայրենիքի արժանավոր քաղաքացիներ լինելու համար։ Անհուն շնորհակալություն մեծ Ստալինին, որ հնարավորություն տվեց մեզ մեր հայրենիքը գտնելու։

Կարճատև հանգստից հետո ժամանած հայրենադարձները Բաթումիից կուղևորվեն Սովետական Հայաստան։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ

Փետրվարի 25-ին հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգներից հայրենիք վերադարձող հայերի խումբը։ Կայարանում նորեկներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից վերաբնակեցման վարչության և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները, ինչպես նաև եկվորների հարազատներն ու ազգականները։

Նույն օրը հայրենադարձները տեղավորվեցին նրանց համար նախօրոք պատրաստված բնակարաններում։